««Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՕ-152-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում, 9-րդ հոդվածի 4-րդ մասում, 16-րդ հոդվածի 1-ին մասում «4-րդ կետով» բառերից հետո լրացնել «կամ 4.2-րդ մասով» բառերը:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասից հանել «կամ 2-րդ» բառերը, իսկ 2-րդ մասում «2-րդ մասի» բառերից հետո լրացնել «2-րդ կամ» բառերով:

Հոդված 3. Օրենքի 21-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.2-րդ և 4.3-րդ մասերով՝

«4.2. Երեխա ունեցող մինչև 24 տարեկան (ներառյալ) գործազուրկ կինը, որը չունի բարձրագույն մասնագիտական կրթություն, սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավունքներից բացի ունի բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալուն նախապատրաստման աջակցության իրավունք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

4.3. Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատանք փնտրող անձը՝ մինչև երեխայի երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, ունի երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության իրավունք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ին: